

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը 2019թ. հոկտեմբերի 29-31-ը նախատեսում է անցկացնել «Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտամեթոդական գիտաժողով:

Հիմնական գիտական ուղղություններն են՝

1. Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հոգեբանամանկավարժական հիմնահարցերը
2. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիալ-հասարակական, պատմամշակութային հիմնախնդիրները
3. Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության բժշկակենսաբանական հիմնահարցերը

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը:

Հոդվածներն ընդունվում են մինչև 2019 թ. մարտի 29-ը:

Գիտաժողովի նյութերը հրատարակվելու են «Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հիմնախնդիրները» խորագրով գիտամեթոդական պարբերականներում:

### ***Նյութերին ներկայացվող պահանջներն են.***

1. վերևում՝ էջի կենտրոնում, մեծատառերով տպագրվում է նյութի վերնագիրը, 1 ինտերվալ ցած՝ հեղինակի (3-ից ոչ ավելի) գիտական աստիճանը, կոչումը, անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը՝ լրիվ, որից 1 ինտերվալ ներքև՝ կազմակերպության, երկրի, քաղաքի լրիվ անվանումները, ապա՝ առանձին պարբերությամբ նշվում են նյութի առանցքային բառերը (5-8 բառ),

2. նյութի ծավալը պետք է լինի 3 էջից ոչ պակաս, MS Word 2007 ֆորմատով, 1 ինտերվալով՝ կիրառելով GHEA Grapat տպատառը (շրիֆտը) 3 լեզուներով, տպատառի չափը՝ 12 պունկտեր, էջի յուրաքանչյուր կողմից 2 սմ տարածություն, թղթի չափը՝ A4 ֆորմատ (210x297 մմ),

3. ներկայացվող նյութերում անհրաժեշտ է ներկայացնել ուսումնասիրվող հարցի արդիականությունը, նպատակը, խնդիրներն ու հետազոտության մեթոդիկական, արդյունքների վերլուծությունը, եզրակացությունը և ուսումնասիրված գրականության ցանկը՝ այբբենական կարգով (նշել թեմային առնչվող մինչև 10 հիմնական աղբյուրներ): Եթե աշխատանքում կա հղում որևէ հեղինակից, ապա այդ հեղինակը պետք է լինի գրականության ցանկում: Հղումները տեքստում գրել ուղղանկյուն փակագծերում:

Վերջում՝ մեկ առանձին պարբերությամբ, ներկայացնել հայերեն տեքստին՝ ռուսերեն և անգլերեն, ռուսերենին՝ հայերեն և անգլերեն, անգլերենին՝ հայերեն և ռուսերեն՝

հողվածի վերնագիրը, հեղինակի (4-ից ոչ ավելի) անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը՝ լրիվ, գիտական աստիճանը, կոչումը, առանցքային բառերը (5-8 բառ) և ամփոփագրերը՝ մինչև 70 բառի սահմանում,

4. աղյուսակներ, գծանկարներ, բանաձևեր տեղադրել խիստ անհրաժեշտության դեպքում,

5. աշխատանքները պետք է հրատարակված չլինեն,

6. յուրաքանչյուր աշխատանք պետք է ունենա երաշխավորագիր ամբիոնի վարիչի կողմից կամ կարծիք,

7. նյութերը ներկայացնել 1 օրինակից՝ էլեկտրոնային տարբերակով և տպագիր՝ ինստիտուտի աշխատակիցների համար յուրաքանչյուր էջը սահմանել 500 դրամ, հանրապետության բուհերի դասախոսների համար՝ 1000 դրամ, պարբերականի համար՝ 2000 դրամ, իսկ ԱՊՀ երկրների բուհերի դասախոսների համար՝ 10. 000 դրամ (կամ համարժեք 1.500 ռուսական ռուբլի): Այն երկրները, որոնց հետ համագործակցում է ՀՖԿՍՊԻ-ն գիտական և ուսումնական գործընթացներում, հողվածի տպագրման և ժողովածուի համար նախատեսված գումարները չեն գանձվում:

Վճարումը կատարել աշխատանքի ընդունման վերաբերյալ համապատասխան գիտական հանձնախմբի դրական պատասխանից հետո՝

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հաշվեհամարին՝ ՀՎՀՀ 01505821, Հայէկոնոմբանկի Մյասնիկյանի մասնաճյուղ՝ ՀՀ 163038103145 (նպատակը՝ գիտաժողովի հողվածներ)՝ մինչև 2019թ. ապրիլի 30-ը հետևյալ հասցեով՝ Երևան, Ա.Մանուկյան 11, 84-85 սենյակ, հեռախոս 55-33-10/1-17, E-Mail - asipc@yandex.ru:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**